Տնօրեն
Ա. Աղիկյան

ՄԿԱՏ
Կ. Բարխուդարյան

Լոռու մարզի Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա 12-րդ դասարանի դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր

Դասղեկ՝ Շ. Նալբանդյան

Դասղեկական ժամերի ընթացքում առաջին հերթին անդրադարնալու եմ՝ աշակերտների կողմից, ներքին կարգապահական կանոնների մշակմանը: Աշակերտները առանձնացնելու են իրենց դասարանում առկա կարգապահական խնդիրները, բացթողումները, խմբային աշխատանքի միջոցով մշակելու են իրենց դասարանի կանոնները, զարգացնելու են նաև խմբում աշխատելու կարողություններն ու հմտությունները:

Հաշվի առնելով և՝ ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և՝ տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և՝ դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ նպատակ ունեմ՝ երեխաների մոտ զարգացնել առողջ ինքնաքննադատությունը, իրերին և սեփական արարքներին այլ տեսանկյունից նայելու կարողությունն ու հմտությունը:,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչելու եմ բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Երեխաները կկարողանան տարբերակել ամենատարբեր լավ և վատ երևույթները, սովորել «առողջ» բանավիճել, հակադարձվել՝ բերելով հիմնավոր փաստարկներ:

Դասի համարը	Դասի թեման
1	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:
2	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս

	պատրաստ պահպանելու մեր ազգային որակները:
3	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:
4	Հավատ, գաղափարախոսություն, պատմություն և ժամանակ:
5	Հայաստանի հուշարձաններ: Ո՞ւր կուզենայի գնալ հաջորդ ուսումնական էքսկուրսիայի ժամանակ:
6	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:
7	Նյութապաշտություն և շահ: Անշահախնդիր նվիրում:
8	Ճակատագի՞ր, թե սեփական բախտի տնօրինում:
9	Հոգու կրթություն:
10	Հոգու կրթություն և մտքի թռիչք:
11	Ոսկե աշնան գույներն իմ խոհերում:
12	Աշնանային էքսկուրսիա :
13	Էքսկուրսիայից ստացած տպավորության քննարկում, ներկայացման վերլուծություն:
14	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները:
15	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:
16	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում:
17	Հայրենի՛ք,ես զարկն եմ քո բազկի:
18	Հայոց բանակ
19	Մարմնակրթություն, առողջապահություն:
20	Հիգիենիկ հարցեր:
21	Մարդկային արատներ:
22	Մարդկային արատներ:
23	Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:
24	Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով:
25	Սերը որպես տիեզերական զգացմունք:
26	Հանճարները սիրո մասին:
27	Սերը ոգեշնչման աղբյուր:
28	Խրատանի, առածանի, մեկնաբանություններ:
29	Ինքնատիրապետման մի քանի հարցեր:
30	Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:
31	Հաղթանակների ամիս մայիս:
32	Քչերը գիտեն, շատերը չգիտեն(հետաքրքիր տեղեկություններ):
33	Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը:
34	Ամփոփիչ դաս: